ԴԷՊԻ ՏՈՒՆ

Տօկիօից անցանք գեղանկար Նիկկօ, որ յայտնի է իր դամբարան-տաճարներով, որոնք կառուցած են Ճապոնի սիրած ու մեծարած հերոս Իէասի յիշատակին:

Այդտեղից Նագասակի արդէն ստիպւած էինք խիստ շտապել, որպէս զի Վլադիվոստոկ մեկնող կամաւոր նաւատորմղի շոգենաւին հասնել կարողանանք: Եւ հազիւ հասանք:

Մեկնող շոգենաւի տախտակամածի վրա դարձեալ եռում էր նոյն առեւտուրը: Եւ ես դժւարութեամբ անցայ յատակին փռած բազմատեսակ ապրանքների միջով, մինչեւ հասայ նաւի ծայրը, ու մի վերջին հայեացք ձգեցի քաղաքին ու կապոյտ ծոցին, որոնք մայր մտնող արեւի ճառագայթների տակ մի առանձին ոսկեզօծ փայլ էին ստացել:

Լսւեց շոգենաւի սոյլը: Վաճառականները մի ակնթարթում հաւաքեցին իրանց իրերը, կապեցին. ու, խոր-խոր գլուխ տալով, արագ անհետացան նաւի սանդուխից:

Խարիսխն ահա քաշւած է արդէն, ու մենք շարժւեցինք առաջ:

Կամաց անցնում, ետ-ետ են գնում ու կորչում աչքերիցս ցած ու հարթ ծովեզրն ու քարափը իր փայտէ տներով, ջօնկերն ու նաւակները իրանց բեռներով, ու վերջն էլ զմրուխտի կղզեակները իրար ետեւից լողում են, անցնում ու քիչ-քիչ թաղւում կապոյտ ու մթնող հեռաւորութեան մէջ:

—Սայնարա՛ (մնաս բարով), Ճապոն,— ասում եմ ես ակամայ, եւ զգում եմ, որ տխուր եմ:

Մեքենան արագացրեց իր կանոնաւոր դղրդիւնը: Զով քամին դէմ վազեց մեզ, բաց ծովն էր մեր առաջ իր լայն